**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՏԵՍԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N *ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/41***

ք. Արտաշատ « 19 » մարտ 2026թ.

«***Արփաշափի համայնքապետարան***», ի դեմս համայնքի ղեկավար Կ. Մկրտչյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Միսակ Դավթյան Ա/Ձ -ն, ի դեմս Միսակ Դավթյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Արփաշափի համայնքի վարչական բնակավայրերում տեղադրված տեսահսկողական համակարգի վերանորոգման, սպասարկման և պահպանման ծառայություններ*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***5 000 000 (հինգ միլիոն)*** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

4.1.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է ***5 535 980 (հինգ միլիոն հինգ հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր ութսուն)*** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի *25-ը:*

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ

սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական

...րծակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Միսակ Դավթյան Ա/Ձ
Արարատի մարզ գ. Նորաշեն Ն.
Ստեփանյան 7
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/հ 2475504718550000
ՀՎՀՀ 47855442
Ձեռնարկատեր՝ Մ. Դավթյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 19 » մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/41 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50321600/1 | | դրամ | 5 000 000 | 1 | Արտաշատ համայնք, ըստ պատվիրատոի պահանջի՝ համաձայն Աղյուսակ 2-ի | Կողմերի միջև պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2026թ. |
| ***մեկ միավորի առավելագույն գին*** | | | | ***5 535 980*** | ***1*** | | |

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Անհրաժեշտ է իրականացնել Արտաշատի համայնքապետարանի և Արտաշատ համայնքի վարչական բնակավայրերում տեղադրված տեսահսկողական ցանցի վերանորոգման, սպասարկման և պահպանման ծառայություններ:

Տեսահսկողական ցանցի վերանորոգման, սպասարկման և պահպանման ծառայություններն իրականացվում են ըստ ստորև ներկայացված Աղյուսակ թիվ 1-ի: Տեսահսկողական ցանցի վերանորոգման, սպասարկման և պահպանման, պահեստամասերի փոխարիման ծառայություններն իրականացվում են ըստ ստորև ներկայացված Աղյուսակ թիվ 1-ի: Ծառայության մատուցման հասցեն, տեսակը, քանակը ներկայացված են ըստ ստորև ներկայացված Աղյուսակ թիվ 2-ի:

Մատուցողը պետք է Պատվիրատոի պահանջի դեպքում 2 օրվա ընթացքում բացահայտի առկա անսարքությունը, խափանումը կամ այլ թերությունները և 3 օրվա ընթացքում կատարի համապատասխան գործողություններ՝ թերությունների վերացման նպատակով: **Նշված նախահաշվային գինը (3 000 000 ՀՀ դրամ) առավելագույնն է պատվիրատուն ծառայությունների դիմաց կկատարի վճարում ըստ մատուցված ծառայությունների արժեքի: Մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկը տեսահսկողական ցանցի պահեստամասերի, նյութերի փոխարինման կամ վերանորոգման ծառայությունների մեկ միավորի գների հանրագումարն է:**

Մատուցողը պարտավոր է օգտագործել տվյալ տեսահսկողական ցանցի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և նյութեր: Օգտագործվող պահեստամասերն ու նյութերը պետք է լինեն որակով, նոր, չօգտագործված, համապատասխան տվյալ տեսահսկողական ցանցի ֆիրմային:

Պայմանագիրը կողմերի միջև ուժի մեջ մտնելուց հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում կատարողը պարտավոր է ներկայացնել հաշվետվություն ՝

1. Աղյուսակ թիվ 3 -ով ներկայացված Տեսահսկողական ցանցի վիճակի ուսումնասիրություն և գնահատում: Որով կորոշվի Տեսահսկողական ցանցի տեխնիկական վիճակը , դրանց հետագա շահագործման համար մատուցվելիք ծառայությունները, ինչպես նաև տնտեսական հաշվարկ Տեսահսկողական ցանցի վերանորոգման կամ նորով փոխարինման անհրաժեշտության մասին:

**Աղյուսակ թիվ 1**

***ՏԵՍԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ,ՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ***

| Հ/Հ | ԱՆՎԱՆՈՒՄ | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **հոսանքի սնուցման աղբյուրի փոխարինում** | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **մայրական սալիկի փոխարինում** | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **մետաղական պատյանի փոխարինում** | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **դիտարկման օպտիկայի փոխարինում** | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **էկրանի փոխարինում** | Փոխարինվող պահեստամասի մեկ միավորի արժեք /ՀՀ դրամ/ **ամբողջությամբ փոխարինում նորով** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ցանցային տեսաձայնագրիչ HIKVISION DS-96128NI-I16 | 39000 | 702000 | 78000 | - | - | 1074830 |
| 2 | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A | 7800 | 117000 | 23400 | 39000 | - | 171600 |
| 3 | Մոնիտոր CCTV HIKVISION DS-D5050UC | 7800 | | 23400 | - | 93600 | 257400 |
| 4 | Կոշտ սկավառակ ST8000VX001 | - | - | - | - | - | 93600 |
| 5 | Մալուխ ParLan complex F/UTP4 Cat5e PVC/PEtr 2x0,75 | - | - | - | - | - | 330 |
| 6 | Ցանցային PTZ տեսախցիկ 2MP HIKVISION DS-2DE7A245IX-AE/S1 | 7800 | 124800 | 23400 | 46800 | - | 226200 |
| 7 | Չկառավարվող PoE սվիչ HIKVISION DS-3E0505HP-E | - | - | - | - | - | 45240 |
| 8 | Ցանցային տեսախցիկ 5ՄՊ HIKVISION | 19500 | 19500 | 7800 | 15600 | - | 39000 |
| 9 | Փակ տուփեր IP67 | - | - | - | - | - | 7020 |
| 10 | Չկառավարվող սվիչ 24 մուտք /1000 ՄԲ/, | - | - | - | - | - | 46800 |
| 11 | Չկառավարվող սվիչ 5 մուտք /1000 ՄԲ/, | - | - | - | - | - | 9360 |
| 12 | UPS-ի մարտկոց | - | - | - | - | - | 11700 |
| 13 | Մուտքը կասեցնող սարք՝ արգելափակոց | 70200 | 195000 | 62400 | - | 27300 | 429000 |
| 14 | Smart ups 3000 | - | 210600 | 62400 | - | - | 842400 |
| 15 | Smart ups 2000 | | 179400 | 54600 | - | - | 452400 |
| | *Մեկ միավորի առավելագույն արժեքը* | *152100* | *1548300* | *335400* | 101400 | *120900* | *3277880* |
| | *ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մեկ միավորի առավելագույն արժեքը* | | | | | | *5535980* |

**Աղյուսակ թիվ 2**

***ՏԵՍԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ***

| Հ/Հ | ՏԵՍԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐ | ՏԵՍԱԿ | ՔԱՆԱԿ |
|---|---|---|---|
| 1 | Ք. Արտաշատ Օգոստոսի 23/64 | Ցանցային PTZ տեսախցիկ 2MP HIKVISION DS-2DE7A245IX-AE/S1 կամ համարժեք | 1 հատ |
| 2 | Ք. Արտաշատ, Թատրոնի շենք | Ցանցային PTZ տեսախցիկ 2MP HIKVISION DS-2DE7A245IX-AE/S1 կամ համարժեք | 1 հատ |
| 3 | Ք. Արտաշատ, Սուրբ Հովհաննես եկեղեցու տարածքում | Ցանցային PTZ տեսախցիկ 2MP HIKVISION DS-2DE7A245IX-AE/S1 կամ համարժեք | 1 հատ |
| 4 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Ցանցային PTZ տեսախցիկ 5MP HIKVISION տեսախցիկներ | 3 հատ |
| 5 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Ցանցային տեսաձայնագրիչ HIKVISION DS 7732NI-32կամ համարժեք | 1 հատ |
| 6 | Արտաշատ համայնքի Արտաշատի | Ցանցային տեսաձայնագրիչ HIKVISION DS 7732NI- | 1 հատ |

| | | | |
|---|---|---|---|
| | համայնքապետարան | 32կամ համարժեք | |
| 7 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | Մոնիտոր CCTV HIKVISION DS-D5050UC կամ համարժեք, | 1 հատ |
| 8 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Մոնիտոր CCTV HIKVISION DS-D5050UC կամ համարժեք, | 1 հատ |
| 9 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Կոշտ սկավառակ ST8000VX001 կամ համարժեք | 1 հատ |
| 10 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | Կոշտ սկավառակ ST8000VX001 կամ համարժեք | 8 հատ |
| 11 | Արտաշատի համայնքապետարանի վարչական շենք | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 10 հատ |
| 12 | Արտաշատ համայնքի Բերքանուշ-Դալար խաչմերուկում | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 2 հատ |
| 13 | Երևան- Երասխ մայրուղու Արտաշատի տարածքում | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 2 հատ |
| 14 | Արտաշատ քաղաքի Իսակով – Արագի խաչմերուկ | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 2 հատ |
| 15 | Արտաշատ քաղաքի Մարքսի փ. Ներսիսյան փողոցների խաչմերուկ | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 1 հատ |
| 16 | Արտաշատ քաղաքի Քլամար այգի | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 8 հատ |
| 17 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Տեսախցիկ 5ՄՊ HIKVISION կամ համարժեք | 23 հատ |
| 18 | Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի և Օգոստոսի 23 փողոցի հատման խաչմերուկ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 2 հատ |
| 19 | Արտաշատ քաղաքի Մարքսի փողոցի սկզբնամասում | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 20 | Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցից դեպի Շահումյան գյուղ տանող ճանապարհ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 21 | Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 և Իսահով փողոցի հատման խաչմերուկ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 2 Հատ |
| 22 | Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի սկզբնամաս | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 23 | Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 Երևանյան փ. հատման խաչմերուկ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 24 | Արտաշատ քաղաքի Երևանյան փողոց | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 2 հատ |
| 25 | Արտաշատ քաղաքի Երևանյան փողոցի սկզբնամաս-Երևան Երասխ Մայրուղի | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 2 հատ |
| 26 | Արտաշատ քաղաքի Երևան Երասխ մայրուղու Արտաշատ քաղաքի կամրջի հատված | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 2 հատ |
| 27 | Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի և Վերին Արտաշատ բնակավայր գնացող խաչմերուկ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 28 | Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի և Մրգավան բնակավայր գնացող խաչմերուկ | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 29 | Արտաշատ համայնքի Մխչյան բնակավայր | Տեսախցիկ պետհամարանիշ ֆիքսող HIKVISION iDS-TCM203-A կամ համարժեք | 1 հատ |
| 30 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Մալուխ ParLan complex F/UTP4 Cat5e PVC/Petr | 6 000 մ |
| | Արտաշատ քաղաքի Քլամար այգի | Մալուխ ParLan complex F/UTP4 Cat5e PVC/Petr | 500 մ |
| 31 | Տեսախցիկների գտնվելու հասցեներում | Չկառավարվող PoE սվիչ | 20 հատ |
| 32 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Չկառավարվող PoE սվիչ | 10 հատ |
| 33 | Տեսախցիկների գտնվելու հասցեներում | Փակ տուփեր IP67 | 43 հատ |
| 34 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Փակ տուփեր IP67 | 27 հատ |
| 35 | Արտաշատ քաղաքի Քլամար այգի | Չկառավարվող PoE սվիչ | 4 հատ |
| 36 | Արտաշատ համայնքի Արտաշատի | Չկառավարվող սվիչ 24 մուտք /1000 ՄԲ/ | 3 հատ |

| | | | |
|---|---|---|---|
| | համայնքապետարան | | |
| 37 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | Չկառավարվող սվիչ 5 մուտք /1000 ՄԲ/ | 6 հատ |
| 38 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | UPS-ի մարտկոց | 12 հատ |
| 39 | Արտաշատ քաղաքի Քլամար այգի | Մուտքը կասեցնող համակարգ՝ արգելափակոց | 1 հատ |
| 40 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Մուտքը կասեցնող համակարգ՝ արգելափակոց | 1 հատ |
| 41 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | Մուտքը կասեցնող սարք՝ արգելափակոց | 1 հատ |
| 42 | Արտաշատ համայնքի Արտաշատի համայնքապետարան | Smart ups 3000 | 1 հատ |
| 43 | Արտաշատ քաղաքի Մարզադաշտ | Smart ups 2000 | 1 հատ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Միսակ Դավթյան Ա/Ձ
Արարատի մարզ գ. Նորաշեն Ն. Ստեփանյան 7
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/հ 2475504718550000
ՀՎՀՀ 47855442
Ձեռնարկատեր՝ Մ. Դավթյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 19 » մարտ 2026թ. կնքված*
*ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-26/41 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50321600/1 | Արտաշատի համայնքի վարչական բնակավայրերում տեղադրված տեսահսկողական համակարգի վերանորոգման, սպասարկման և պահպանման ծառայություններ | 0 | 0 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Արտաշատի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ,
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 04240737
Հ/Հ՝ 900412201023
Համայնքի ղեկավար՝ Կ. Մկրտչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Միսակ Դավթյան Ա/Ձ
Արարատի մարզ գ. Նորաշեն Ն. Ստեփանյան 7
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/հ 2475504718550000
ՀՎՀՀ 47855442
Ձեռնարկատեր՝ Մ. Դավթյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ